

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 2019Թ. ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, 2018-2019թթ., %




Տնտեսական ակտիվության ցուցանիշի կուտակային աճի տեմպը 2019թ. հունվար-ապրիլ ամիսներին արագացել է՝ կազմելով 7.0 տոկոս: Սակայն, այն դեռևս 2.5 տոկոսային կետով ավելի ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Մինչույն ժամանակ, ապրիլ ամսվա ՏԱՅ-ի աճը նախորդ տարվա ապրիլի նկատմամբ կազմել է 9.2 տոկոս: Ինչպես նախորդ ամիսներին, այս ամիս ևս ՏԱՅ-ի ցուցանիշները վերանայվել են: Մասնավորապես՝ հունվար-մարտ ամիսների ՏԱՅ-ը 6.5 տոկոսից դարձել է 6.2, իսկ հունվար ամսվա ցուցանիշը 5.5%-ից՝ 5.4%:

2019թ. հունվար-ապրիլ ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշի աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (7.7 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև առևտրի (1.2 տոկոսային կետով), արդյունաբերության (0.9 տոկոսային կետով) և շինարարության (0.6 տոկոսային կետով) համախառն թողարկման իրական աճերը (տե՛ս Գծապատկեր 2):


Հունվար-ապրիլ ամիսների գյուղատնտեսության աճը չի հրապարակվել, հունվար-մարտ ամիսների տվյալներով գյուղատնտեսության ոլորտի թողարկումը նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 0.2 տոկոսով, իսկ նպաստումը SUՑ-ին գրեթե զրոյական է եղել:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-ապրիլ, %



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




*Գյուղատնտեսության ցուցանիշն այսուհետ հրապարակվելու է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 4.5 տոկոսով: 2018թ. նույն ցուցանիշը կազմել էր 5.2 տոկոս:

Արդյունաբերության ոլորտի աճերը նույնպես վերանայվել են: Այսպես՝ հունվար-մարտ ամիսների ցուցանիշը 2.0%-ից դարձել է 1.6%, իսկ հունվար-փետրվար ամիսների ցուցանիշը՝ 1.9%-ից 1.3%:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %




Շինարարության ծավալի աճի տեմպը 2019թ. սկզբում բավական բարձր էր, սակայն այն աստիճանաբար դանդաղում է: Առաջին չորս ամիսներին շինարարության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է ընդամենը 8.0 տոկոս, ինչը 13.8 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսության կառուցվածքում ամենաարագ աճող ճյուղը շարունակում է մնալ ծառայությունների ոլորտը: Ընթացիկ տարվա հունվար-ապրիլ ամիսներին ծառայություններն աճել են 17.0 տոկոսով, որը սակայն 0.5 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Աղյուսակ 1. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-մարտ²


	2018 մլն դրամ	2019 մլն դրամ	Կշիռը, 2018թ. %	Աճ, %	Նպաստում, տոկոսային կետ
Ծառայություններ, այդ թվում՝	356,467.2	421,577.1	100.0	117.3	17.3
կացության և հանրային սննդի կազմակերպում	20,957.7	26,293.7	5.9	123.5	1.4
մշակույթ, զվարճություններ և հանգիստ	72,492.6	103,600.4	20.3	140.0	8.1
կրթություն	13,373.3	14,429.3	3.8	106.5	0.2
առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	15,566.4	18,934.0	4.4	116.9	0.7
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	13,252.9	13,902.7	3.7	103.4	0.1
տեղեկատվություն և կապ	57,461.0	62,078.0	16.1	108.0	1.3
տրանսպորտ	45,772.6	47,283.1	12.8	101.9	0.2
վարչարարական և օժանդակ գործունեություն	14,719.3	15,396.5	4.1	106.9	0.3
մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	14,470.3	15,141.7	4.1	104.2	0.2
ֆինանսական և ապահովագրական գործունեություն	81,421.9	97,431.3	22.8	120.3	4.6
սպասարկման այլ ծառայություններ	6,979.2	7,086.4	2.0	100.9	0.0

Ծառայությունների կառուցվածքում նույնպես զգալի փոփոխություններ չեն գրանցվել: Ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ոլորտը, որը հունվար-մարտ ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 8.1 տոկոսային կետով: Աճին նպաստել են նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության (4.6 տոկոսային կետով), կացության և հանրային սննդի կազմակերպման (1.4 տոկոսային կետով) ոլորտներում մատուցված ծառայությունների աճերը (տե՛ս Աղյուսակ 1):

² 2019թ. հունվար-ապրիլ ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Առևտրի շրջանառության աճի տեմպն ընթացիկ տարվա հունվար ամսին եղել է ավելի բարձր, քան նախորդ տարի, սակայն փետրվար ամսից սկսած կուտակային աճի տեմպը դանդաղել է: Հունվար-ապրիլ ամիսներին ոլորտի կուտակային աճի տեմպը կազմել է 9.8 տոկոս, որը 1.0 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Տնտեսական աճը (ամբողջական առաջարկ)

Աղյուսակ 2. ՀՆԱ-ի իրական աճը և ճյուղերի նպաստումները, 2017-2019թթ.

	2017 հունվար- մարտ	2017 հունվար- հունիս	2017 հունվար- սեպտեմբեր	2017 հունվար- դեկտեմբեր	2018 հունվար- մարտ	2018 հունվար- հունիս	2018 հունվար- սեպտեմբեր	2018 հունվար- դեկտեմբեր	2019 հունվար- մարտ
ՀՆԱ	7.2	6.9	5.8	7.5	10.2	8.7	6.2	5.2	7.1
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	1.4	1.0	0.4	1.0	1.6	1.0	0.8	0.8	0.9
Գյուղատնտեսություն	-0.3	-0.5	2.4	-0.8	0.0	0.4	-0.9	-1.3	0.0
Արդյունաբերություն	2.9	1.9	0.8	2.1	2.0	1.8	1.5	1.1	0.1
Շինարարություն	-0.5	-0.8	0.2	0.2	0.5	0.4	0.2	0.1	0.3
Առևտուր	1.8	2.5	0.7	2.0	1.6	1.3	1.2	1.0	1.3
Ծառայություններ	2.0	2.9	1.4	3.1	4.6	4.0	3.5	3.7	4.4

2019թ. առաջին եռամսյակում համախառն ներքին արդյունքի իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 7.1 տոկոս, որը 2018թ. համապատասխան ցուցանիշից 3.1 տոկոսային կետով ավելի ցածր է:


Տնտեսական աճին ամենամեծ նպաստումը շարունակում է ունենալ ծառայությունների ոլորտը, որը 2019թ. առաջին եռամսյակում կազմել է 4.4 տոկոսային

կետ (առանց առևտրի): ՀՆԱ-ի իրական աճին առևտրի նպաստումը կազմել է 1.3 տոկոսային կետ, իսկ մյուս ոլորտների նպաստումները գրեթե զրոյական են:

Տնտեսական աճի տեմպը 2019թ. առաջին եռամսյակում մոտ է 2017թ. համապատասխան ցուցանիշին, սակայն հարկ է նշել, որ 2017թ. ՀՆԱ-ի աճն ավելի շատ պայմանավորված էր արդյունաբերության աճով: Ընդ որում, 2017թ. առաջին եռամսյակում արդյունաբերության 2.9 տոկոսային կետ նպաստումից 1.8-ը պայմանավորված էր մշակող արդյունաբերության աճով, իսկ 0.5-ը՝ հանքագործական արդյունաբերության աճով:

Տնտեսական աճը (ամբողջական պահանջարկ)


Գծապատկեր 7. ՀՆԱ-ի իրական աճը և ամբողջական պահանջարկի տարրերի նպաստումները, 2018-2019թթ., %



Պահանջարկի կառուցվածքում նույնպես կան բացասական միտումներ: Այսպես, եթե նախորդ տարի տնտեսական աճը առավելապես պայմանավորված էր ներդրումների աճով, ապա 2019թ. առաջին եռամսյակում տնտեսական աճը պայմանավորվել է միայն սպառման աճով: Ընդ որում, ներդրումների նպաստումը եղել է բացասական՝ 2.8 տոկոսային կետ: Բացասական է նպաստել նաև զուտ արտահանումը՝ -1.9 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է արտահանման ծավալների կրճատմամբ:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Գծապատկեր 8. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Արտահանման ծավալը 2019թ. ապրիլին 2018թ. ապրիլի նկատմամբ գրանցել է 9.9 տոկոս աճ: Սակայն այն դեռ բավական չի եղել կուտակային աճ գրանցելու համար: Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով արտահանումը նվազել է 8.6 տոկոսով՝ նախորդ տարվա 25.7 տոկոս աճի դիմաց:

Վերանայվել են նաև արտահանման աճի ցուցանիշները, ինչի արդյունքում 2019թ. հունվար-մարտ ամիսների արտահանման 12.0 տոկոս անկումը դարձել է 14.5 տոկոս անկում:

Արտահանման ծավալների նվազմանն ամենամեծ նպաստումն է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 18.3 տոկոսով կրճատումը, որը ընդհանուր արտահանման անկմանը նպաստել է 5.4 տոկոսային կետով: Նվազել են նաև «ոչ թանկարժեք մետաղներ» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները, որոնք ընդհանուր արտահանմանը նպաստել են համապատասխանաբար -3.5, -1.4 տոկոսային կետով: Արտահանման աճ է գրանցվել «թանկարժեք մետաղներ», «սարքեր և ապրանքներ», ինչպես նաև «պատրաստի սնունդ» ապրանքախմբերում, որոնց դրական նպաստումն ընդհանուր արտահանմանը կազմել է համապատասխանաբար 1.4, 1.2 և 0.4 տոկոսային կետ⁴:


* Ներկայացված են 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսների արտաքին առևտրի վերանայված տվյալները:

⁴ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-մարտ ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-ապրիլ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

* Ներկայացված են 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսների արտաքին առևտրի վերանայված տվյալները:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Գծապատկեր 9. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալները, նախորդ տարվա բավական բարձր աճի ցուցանիշներից հետո, ընթացիկ տարվա սկզբից նվազում են: Հունվար-ապրիլ ամիսներին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 1.9 տոկոսով:


Ներմուծման ցուցանիշների վերանայման արդյունքում նախորդ ամիս հրապարակված հունվար-մարտ ամիսների -3.1 տոկոս անկումը դարձել է -8.9 տոկոս:

Ներմուծման ծավալների անկումը հիմնականում պայմանավորված է «սարքավորումներ» (բացասական նպաստումը՝ -2.2 տոկոսային կետ), «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ» (բացասական նպաստումը՝ -1.4 տոկոսային կետ), «պատրաստի սնունդ» (-0.9 տոկոսային կետ) և «քիմիական արտադրանք» (-0.9 տոկոսային կետ) ապրանքախմբերի ներմուծման ծավալների նվազմամբ⁵:

⁵ Ներմուծման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-մարտ ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-ապրիլ ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


Գծապատկեր 10. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., հունվար-մարտ, %⁶




2019թ. հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.2 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 6.7 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 4.8 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 3.9, 1.0 և 4.6 տոկոս:

ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 11. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճը, % (աճը նշանակում է << դրամի արժևորում)



⁶ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վերանայված տվյալներով:



2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.1 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը դրսևորել է կայուն արժևորման միտում՝ հունվար-ապրիլ ամիսներին արժևորվելով 7.4 տոկոսով: Իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը դրսևորել է արժևորման տեմպի նվազման միտում՝ հունվար-ապրիլ ամիսներին արժևորվելով 12.2 տոկոսով:


ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2019 թվականի հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 27.9 տոկոսով, ընդ որում՝ հարկերն ու տուրքերն աճել են 27.3 տոկոսով: Միասնական հաշվի մնացորդը կազմել է 34.4 մլրդ դրամ, որը 35.9 տոկոսով ավելի է, քան նախորդ տարվա ապրիլի վերջի դրությամբ:

Ընթացիկ տարվա չորս ամիսների տվյալներով առկա է հարկային եկամուտների զգալի գերակատարում: Մասնավորապես՝ հունվար-մարտ ամիսների ծրագրային ցուցանիշը գերակատարվել է մոտ 13 մլրդ դրամով, իսկ ապրիլ ամսին նախատեսված 126 մլրդ դրամի փոխարեն հավաքագրվել է 166.6 մլրդ դրամ: Այսպիսով, հունվար-ապրիլ ամիսների գերակատարումը կազմել է մոտ 53.6 մլրդ դրամ:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին կազմել են 415.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 10.1%-ով, որը առավելագույն (12.5 տոկոսային կետով) պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 53.6 տոկոսով (նպաստումը՝ -2.4 տոկոսային կետ):

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԵԿՇԻՈՒԸ


Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ, ժամանակահատվածի վերջի դրությամբ



2019թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեն եղել է հավելուրդային, և այն կազմել է 78.6 մլրդ դրամ: Հավելուրդը պայմանավորված է ինչպես ծախսերի թերակատարմամբ, այնպես էլ հարկային եկամուտների զգալի գերակատարմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



2019թ. ապրիլի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 6,899.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 1.5 տոկոսով: Պարտքի 92.1 տոկոսը՝ 6,355.9 մլն ԱՄՆ դոլարը, կազմել է կառավարության պարտքը: Վերջինս նախորդ ամսվա (մարտի վերջի) նկատմամբ նվազել է 33.6 մլն ԱՄՆ դոլարով (0.5%-ով), իսկ 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ՝ 17.0 մլն ԱՄՆ դոլարով (0.3%-ով):

ԳՆԱՃԸ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



2019 թվականի ապրիլին նախորդ տարվա ապրիլի նկատմամբ սպառողական գներն աճել են 2.2 տոկոսով՝ նախորդ տարվա 2.4 տոկոսի համեմատ՝ դեռևս ցածր մնալով Կենտրոնական բանկի թիրախից:

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ ԵՎ ԲԱԶԱ

Գծապատկեր 16. Փողի բազայի 12-ամսյա աճը, %



2019թ. ապրիլին փողի բազան կտրուկ աճ է գրանցել: Այսպես՝ 2019թ. ապրիլ ամսվա վերջի դրությամբ փողի բազան աճել է 35.2 տոկոսով՝ նախորդ տարվա զրոյական աճի դիմաց:

Գծապատկեր 17. Փողի զանգվածի 12-ամսյա աճը, %




Փողի զանգվածի աճի տեմպը 2019թ. ապրիլին եղել է ավելի ցածր, քան նախորդ տարի: Փողի զանգվածի աճի տեմպը ունեցել է դանդաղման միտում նախորդ տարի,

որը կարծես թե շարունակվում է ընթացիկ տարում: 2019թ. ապրիլին փողի զանգվածը նախորդ տարվա ապրիլի նկատմամբ աճել է 10.1 տոկոսով:


ԱՎԱՆՂՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԵՐ

Գծապատկեր 18. Ավանդների 12-ամսյա աճը 2018-2019թթ., %




2019թ. ապրիլին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. նույն ամսվա նկատմամբ կազմել է 19.7 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպին (2018թ. ապրիլի աճը՝ 4.3%): Գծապատկեր 18-ից երևում է, որ ապրիլին աճի արագացումը կարող է լինել բազային էֆեկտի հաշվին:

Գծապատկեր 19. Ավանդների 12-ամսյա աճը և տնտեսության հատվածների նպաստումները, 2019թ., %




Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 12.6 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 5.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Ընդհանուր վարկերի 12-ամսյա աճը 2018-2019թթ., %



2019թ. ապրիլին առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալների աճը 2018թ. նույն ամսվա նկատմամբ կազմել է 15.6 տոկոս: Վարկերի ծավալների աճի տեմպը նույնպես ավելի բարձր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Գծապատկեր 21. Ռեզիդենտներին տրամադրված վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, %, 2019թ. հունվար-ապրիլ



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա

համեմատ աճել են 15.9 տոկոսով, որին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 7.6 տոկոսային կետով, ինչպես նաև հիպոթեքային վարկերը և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 2.2 և 2.8 տոկոսային կետով:

Ամփոփելով տեղեկանքը՝ առանձնացնենք մի քանի ուշագրավ դիտարկումներ.

1. Նախորդ ժամանակահատվածի տվյալների ճշգրտումից մի շարք ցուցանիշներ վերանայվել են: Մասնավորապես՝ հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ը 6.5 տոկոսից դարձել է 6.2, իսկ հունվար ամսվա ցուցանիշը 5.5%-ից՝ 5.4%: Արդյունաբերության ոլորտի հունվար-մարտ ամիսների աճի ցուցանիշը 2.0%-ից դարձել է 1.6%, իսկ հունվար-փետրվար ամիսների ցուցանիշը՝ 1.9%-ից 1.3%: Վերանայվել են նաև արտաքին առևտրի աճի ցուցանիշները, ինչի արդյունքում 2019թ. հունվար-մարտ ամիսների արտահանման 12.0 տոկոս անկումը դարձել է 14.5 տոկոս անկում, իսկ ներմուծման՝ հունվար-մարտ ամիսների -3.1 տոկոս անկումը դարձել է -8.9 տոկոս: Հատկանշական է, որ բոլոր ցուցանիշները վերանայվել են դեպի ներքև, այսինքն՝ ստացվում է, որ ընթացիկ հրապարակման ժամանակ արձանագրվում են բարձր աճի տեմպեր (կամ անկման տեմպերը լինում են ավելի համեստ), այնուհետև դրանք վերանայվում են, և պարզվում է, որ պատկերը գրեթե բոլոր ոլորտներում ավելի վատ է եղել, քան հրապարակվել էր: Ընդ որում նշված վարքագիծը առավել աչքի է զարնել 2019թ. հունվարից ապրիլ ընկած ժամանակահատվածում, որից ենթադրվում է, որ այս պահին հրապարակված ցուցանիշները նույնպես հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում վերանայման արդյունքում վատթարանալու են:

2. Գյուղատնտեսության ոլորտի աճերի օպերատիվ ցուցանիշները՝ սկսած 2019 թվականից հրապարակվում են եռամսյակային պարբերականությամբ, ինչը հիմնավորվում է գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններով: Սակայն, հարկ ենք համարում նշել, որ գյուղատնտեսության անկումը ակնհայտ է դեռևս 2017-ից: Մասնավորապես՝ հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության անկումը բացասաբար է նպաստել 2017թ. ՀՆԱ-ի աճին՝ 0.8 տոկոսային կետով, իսկ 2018 թվականին բացասական նպաստումը կազմել է 1.8 տոկոս: Ուստի, գյուղատնտեսության ցուցանիշների միայն եռամսյակային կտրվածքով հրապարակումը առավել քան հետապնդում է այս ոլորտի բացասական աճերի հրապարակումից խուսափելու նպատակ:

3. Ծառայությունների կառուցվածքում ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ոլորտը: Ընդ որում, այս ոլորտը ընթացիկ տարվա հունվար-մարտին աճել է շուրջ 40 տոկոսով, որից 35.3 տոկոսային կետն ապահովվել է «վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեքերական գործունեության կազմակերպում» ենթաճյուղի, իսկ 5.0 տոկոսային կետը՝ «խաղատների գործունեություն» ենթաճյուղի հաշվին:

4. 2019թ. պետական հատվածում միջին աշխատավարձերի ավելացումը ըստ ձեռք բերված նախնական տվյալների պայմանավորված է վարչապետի աշխատակազմի, դատական համակարգի, Կնտրոնական բանկի և Հայկական ատոմակայանի աշխատակիցների աշխատավարձերի ավելացմամբ: Առավել մանրամասն տեղեկատվություն հնարավոր կլինի ձեռք բերել սույն թվականի հունիսի 5-ին ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-ապրիլին» տեղեկատվության հրապարակումից հետո:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: